

ԵԿԵՂ ԵՅԱԳԻՏԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ
Մայր Արոն Սուրբ Էջմիածնի միարան

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵԴԻՄԿՈՂՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆԻ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԾՆՆԴՅԱՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՅՈՒՄՆԵՐԸ

ԺԸ դարի մշակութային և եկեղեցական ճամաչված գործիչների փաղանգի մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի Պետրոս արքեպոս. Բերդումյանը (Աղամալյան-Նախիչևանցի)՝ աստվածաբան, փիլիսոփա, մեկմիջ, աղբյուրագետ, հմուտ մանկավարժ, տաղասաց, հասարակական և եկեղեցական գործիչ, որի մասին խոր ակնածանքով ու պատկառանքով են խոսում իր ժամանակակիցները՝ անվանելով «հրածորան վարդապետ Ս. Եկեղեցու», «իմաստնափայլ և ասսուածաբառան»², «արդիւնական և գերապանձ»³, «այր առատամիտ և լուսաւոր իմաստիւր»⁴ և այլն: Արև թե ինչպես է բնութագրում Հայ Եկեղեցու ալյ անխոնչ մշակին Հովհաննես եպս. Ծահմատումյանցը. «Է՞՞ և բայուր նեզ, վարդուն առաքիմի, պահեցող և ժուծկալ ամեներին, անձանձիր յուսուցանելն ի մեկնելն զբան Սուրբ Գրոց աշակերտելոցն ինքնան»⁵:

Այդքան էլ շատ չեն պահ կյանքի մասին եղած տեղեկությունները, որոնք ցրված են իր իսկ հարուստ մատենագրական ժառանգության առանձին էջերում, պահ գործերի ձեռագիր և տպագիր մատյաններում: Մեծ արժեք ունեն հատկապես հեղինակի գրած այն բանաստեղծություններն ու տաղերը, որոնք երբեմն լուս են սփռում իր կյանքի և գործունեության այս կամ այն դրվագի վրա: Սակայն դրանք ել բավական են՝ պատկերացում կազմելու համար Բերդումյան հեղինակի աշխարհայացքի, մտածողության և այն բոլոր շնորհների մասին, որոնցով օժտված է եղել Սրբազն Հայոր:

Առաջին հեղինակը, որ անդրադարձել է Սրբազն Հոր կյանքին, գործունեության ու մատենագրական վաստակին, Մեսրոպ արք. Թաղիալյանն է: Նա 1827 թ. Կավկազայում հրատարակում է վերջինիս «Ասսուածանմանուութիւն» երկու «Հանգամանք վարուց հեղինակին» բաժնում որոշ տեղեկություններ հաղորդում:⁶ Ժամանակագրական առումով երկրորդ հեղինակը Հովհաննես եպս. Ծահմատումյանցն է, որը Պետրոս Բերդումյանի «Ապաշխարան» ժողովածուից քաղելով որոշ աղոթքներ ու ավելացնելով նոր երգեր և այլ գործեր, 1845 թ. Ս. Էջմիածնում տպագրում է «Երգարան աղօթից ի պէտս վաճառականաց

¹ Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. Զ. կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, Երուապելք, 1972, էջ 75:

² Մեսրոպ Մաշտոցի ամվան Մատենադարան (=ՄՄ) ձեռ. N 2, էջ 92ա:

³ ՄՄ ձեռ. N 6744, էջ 159ա:

⁴ Մսներ Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ 259:

⁵ Երգարան աղօթից ի պէտս վաճառականաց եւ ճանապարհորդաց, Ս. Էջմիածնի, 1845 (Մանօթութիւն):

⁶ Պետրոս Նախիչևանցի, Ասսուածանմանութիւն, Վերստին աշխատութեամբ Մեսրովպայ Դաւթեան Թաղիալյանց Կարքեցու, Կավկազա, 1827. Հանգամանք վարուց հեղինակին (առանց էջակալման):

եւ ճանապարհորդաց» գիրք⁷, որ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Բերդում յամի մասին: Հատկապես այս գործում է մատնանշվում առաջտնաբերված վերջինիս «Գործը Առաքելոցի» մեկնությունը, Սրբազնի մահվան ճշգրիտ թվականն ու բերդում գրա տապանաքարի արձանագրությունը: Պետրոս արքեպոս. Բերդումյանի մասին որոշ տեղեկություններ են հաղորդում Մսեր Մսերյանցը⁸, Ա. Երիցյանը⁹, Հ. Մամուրյանը¹⁰, Հայո Արսեն Ղազիկյանը¹¹, Արշակ Ալպյանյանը¹², Մաղաքիա արքեպոս. Օրմանյանը¹³, Հրաչյա Աճառյանը¹⁴, Լեռնի¹⁵, Ա. Առաքելյանը¹⁶, Գառնիկ Ստեփանյանն¹⁷ ու Արգամ Ալվազյանը¹⁸:

Մեր ժամանակներում Պետրոս Բերդումյանի մշակութային գործումներում անդրադառն է բանասեր Ծուշանիկ Նազարյանը¹⁹: Հետիմակն իր երկու հոդվածներում և մենագրության մեջ համառոտ տալիս է Սրբազնի կյամքի և գործումներում մկարագիրը՝ ավելի շատ ուշադրություն դարձնելով վերջինիս չափածո գործերին՝ գնահատելով նրան իբրև «միջնադարյան եկեղեցական եղց-բանաստեղծության լավագույն ավանդություններից վերակենացնողը ԺՀ դպրում»²⁰: Թվարկված այս աշխատությունների մեջ փաստերի խորը քննությամբ և վերլուծությամբ առանձնանում է Գևորգ սրբ. Աշապահյանի այժմ՝ Միքայել Եպիսկոպոս) ավարտաճառը, որ նա, համադրելով առկա փաստերը, տալիս է Պետրոս Սրբազնի կյամքի, գործումներում և մատենագրական վաստակի գրեթե ամբողջական մկարագիրը²¹: Մայո Աթոռ Սուրբ Էջմիածնի պատունական «Էջմիածն» ամսագրում Բերդումյանի մասին Սրբազն Հոր տպագրած հոդվածից հետո, մի խումբ ճեմարանականներ ձեռնամուխ եղան վերջինիս աստվածաբանական մյուս գործերի ուսում-

7 Տե՛ս Երգարան աղօթից, Ա. Էջմիածնի, 1845:

8 Մսեր Մսերեանց, Աշվ. աշխ., էջ 4, 9, 259-260:

9 Ա. Երիցեան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք. Ա. Թիֆլիս, 1894, էջ 77:

10 Տ. Մամուրեան, Մասմական պատմութիւն հայ մեծատումներու, Կ. Պոյիս, 1909, էջ 88:

11 Հայկական նոր մատենագիտություն եւ համրագիտարան հայ կեամքի, կազմեց Հ. Արսեն Ղազիկեան, Բ. Ա. Վենետիկ, 1909-1912, էջ 337:

12 Պատմութիւն Ետոկիոյ Հայոց, տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով, Բամադրուած՝ Արշակ Ալպյանեամ, Գամիրէ, 1952, էջ 714-716:

13 Մաղաքիա արքեպոս. Օրմանեան, Ազգապատում, Բ. Բ. 1960, Պէյրութ, էջ 3119, 3140, 3235, նաև Ազգապատում, Բ. Գ. Երուսաղէմ, 1927, էջ 3867:

14 Հ. Աճառյան, Հայոց անձնանումների բառարան, Բ. Դ. Երևան, 1948, էջ 260:

15 Լեռ, Երկիրի ժողովածու, Բ. 3, Երևան, 1973, էջ 463-464:

16 Ա. Առաքելյան, Հայ ժողովորի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Բ. 3, Երևան, 1975, էջ 315:

17 Գառնիկ Ստեփանյան, Կենսագրական բառարան, Բ. Գ. գիրք 1, Երևան, 1990, էջ 266:

18 Արգամ Ալվազյան, Նախիջևան բնաշխարհիկ պատկերազարդ համրագիտակ, Երևան, 1995, էջ 316:

19 Ը. Նազարյան, Պետրոս Նախիջևանցի և XVIII դարի վերանորոգվող հայ երգը, ՊԲՀ, N 3, 1981, էջ 128-143. Ը. Նազարյան, Պետրոս Նախիջևանցու «Աղօթական բանք պոեմը», ՊԲՀ, N 2, 1982, էջ 89-101: Ինչպես առև. Ը. Նազարյան, Որի և աթափման բանաստեղծություն, Երևան, 1992:

20 ՊԲՀ, N 3, 1981, էջ 132:

21 Գևորգ սրբ. Աշապահյան, Պետրոս Բերդումյան, կյամքը, գործը և «Մեկնութիւն Յորայ» աշխատությունը, Էջմիածն, 1988 թ. /Մերնագիր/, էջ 1-47: Այս մասին տե՛ս նաև Արա «Էջմիածնի» ամսագրում հրատարակած հոդվածը. «Էջմիածն», N է-Ը, 1991, էջ 33-48:

անահիման գործին ևս: Այսպես՝ Մեծ Պահքի քարոզներն առանձնացրել և ավարտաճափ դնուուր է դարձնել Հրայր սրբ. Խաչատրյանը²² (այժմ Տ. Գրիգոր արքեղա), Վահն սրբ. Վահութիման (այժմ Տ. Գեղարդ արքեղա) պատրաստել է Բերդումյանի «Կշիռ արդարութեան» ուղործի համեմատական բնագիրը²³, իսկ Վարդես սրբ. Մայիսանը (այժմ Տ. Հովհաննես արքեղա)՝ Հայունության մեկնության²⁴: Մեճք նույնպես, հետաքրքրված լինելով այս հետիւնակով, երկու ձեռագրերի համեմատությամբ պատրաստել ենք Վերջինիս ԾԱնող գրքին նմկիրված մեկնության բնագիրը²⁵: Ուսումնասիրված նույթը մեր կողմից ներկայացվել է բորպես ավարտաճառ Գևորգյան Հոգևոր Շեմարանում:

Հարկ է նշել, որ բազմարդուն այս նեկենցականը հարուստ գրական ժառանգություն է թափառ, որի ակնհայտ վկայություններն են այն մեծ թվով ձեռագիր մասյանները, որոնք նշանաօր պահպանվում են հայ ձեռագրերի զանազան հավաքածուներում: Միայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում կան ավելի քան 170 գրչագիր օրինակներ, որոնք ներառում են Պետրոս Սրբազնի այս կամ այն գործը:

Բազմաժամբ է այս հեղինակի մատենագրական ժառանգությունը՝ մեկնություններ, պատվածքանական-փիլիսոփայական երկեր, քարոզներ, տրամաբանական, բարոյախուրատական և այլ գործեր²⁶. Նրա բեղուն գրչին են պատկանում նաև շուրջ 300 բանաստեղ-

²² Հրայր սրբ. Խաչատրյան, Պետրոս արքեպս. Բերդումյան, Տարեկան քարոզներ. Մեծ Պահքի շրջան, Ս. Էջմիածին, 2000, /մեքնագիր/:

²³ Վահն սրբ. Վահութիման, Պետրոս արքեպս. Բերդումյան-Աղամալեան Նախիջևանցի, «Կշիռ արդարության», Ս. Էջմիածին, 2000 /մեքնագիր/:

²⁴ Վարդես սրբ. Մայիսան, Պետրոս արքեպս. Բերդումյան-Աղամալեան Նախիջևանցի, Մեկնութիւն Ցայտութեան Յովիմանու, Ս. Էջմիածին, 2001, էջ 26-60 /մեքնագիր/:

²⁵ Տիգրան սարկավագ Բաղոյիշյան, Պետրոս արքեպսիկոպս Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցի, Մեկնութիւն ԾԱնող (ուսումնասիրություն և բնագիր), Ս. Էջմիածին, 2002 /մեքնագիր/:

²⁶ Սրբազն Հոր մատենագրական վաստակի թիվ շատ ամփոփ բնութագիրը տվել է Միջայի վարդապետը, տե՛ս «Էջմիածին», N է-Ը, 1991, էջ 33-48: Սակայն մեր ավարտաճառի ընթացքում, առաջնորդվելով Հայութիւնը ուսումնասիրությունների արդյունքներով և նոր փատերի հայտնաբերմաք, փորձեցինք տալ Պետրոս արքեպս. Բերդումյանի մատենագրական վաստակի ավելի ամբողջական կարագրությունը: Միիրան Միիրան-Հայս «Հասկ» հայագիտական ամսագրում տպագրած իր նոյնվածում, որ ամերադառնում է Բերդումյանի «Բարոնգրք» նորահաւու մեզ ձեռագրին, վերջինիս մատենագրական ժառանգության մեջ նշում է նաև մեզ առաջմ ամծանոթ «Մեկնութիւն չորից աւետարածաց» գործի մասին, տե՛ս Միիրան Միմասեան, Հայերէն նորայալ ձեռագիր մը («Բարոնգրք» Պետրոս Սրբազն. Աղամալյան-Բերդումյան Նախիջևանցի), տե՛ս «Հասկ» հայագիտական տարեկիրք, նոր շրջան, թ. տարի, 1997-2001, Ամբիլիաս-Լիրաման, 2001, էջ 295: Ցավոք, մեզ շրջողվեց պարզել հեղինակի օգտագործած աղյուրը: Պրատուռները Մաշտոցյան Մատենադարանում ցուց տվեցին, որ նմանատիպ գործ Պետրոս Բերդումյանի ամուռով արձանագրված չէ որևէ ձեռագրացուցակում: Բացառված չէ, որ հեղինակն օգտագործել է որևէ մասմավոր գրապահոցում պահվող մեզ առաջմ ամհայտ ինչ-որ ձեռագրի, կամ էլ դա նոյն «Աղքիր բացեալ» գործն է, որ ձեռագրերում համեստավում է նաև Վերոնդրալ Վերտառությամբ: Բերդումյանի հեղինական փիլիսոփայական երկերից է նաև «Ի Ակատմանց Արհատութէի...» աշխատությունը: Առաջին անգամ այս գործի մասին նշում է բանակի Ծուշամիկ Նազարյանը՝ առանց մատենածելու իր օգտագործած աղյուրը, տե՛ս Ը. Նազարյան, Պետրոս Նախիջևանցին և XVIII դարի վերամորոգնու հայ երգը, ՊԲՀ, N 3, 1981, էջ 130: Մյուս բոլոր հետազոտողները, ովքեր գրավել են Բերդումյանի մատենագրական վաստակով, կամ այս ամուռով գործ չեն գտել ձեռագրացուցակներում, կամ ըստիմարապես չեն նետառնել մրա ժառանգության մեջ, կամ էլ լավագում դեպքում հինգ են Ծուշամիկ Նազարյանին: Հետաքըր-

ծույթումներ, քնարական և պատմական ծավալուն պեմբեր, երկտողյաններ, աղոթքներ, քաղաքներ, ասույթներ և այլն: Արդեն իսկ այս ժամերերի թվարկումը խոսում է Պետրոս արքայի: Բերդումյանի աստվածատուր ձիրքերի ու մտավոր լայն կարողությունների մասին: Ցավոք սրտի պետք է արձանագրենք, որ դեռևս ամտիա են մնում Բերդումյանի գործերի մեծ մասը:

Վերջինիս մեկնողական երկերի մեջ բազմաբովանդակությամբ և, ինչու չէ՝ համրամատչելությամբ իր ուրույն տեղն ունի «Մեկնութիւն Ծննդոց» աշխատությունը: Սրբազնի հեղինակած այս մեկնությունը մեզ է հասել 2 ձեռագիր ընդօրինակություններով (ՄՄ ձեռ. N 2718, էջ 2ա-74ր և Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի ձեռ. N 253, էջ 1-161):²⁷ Ինչպես հաղորդում է Մեսրոպ սրբ. Թաղիաղյանը, Պետրոս արքեպոս. Բերդումյան այս գործը գրել է բանտարկության ընթացքում, 1777 թ.²⁸: Բերդումյանի մյուս գործերի այս գործը գրել է բանտարկության ընթացքում, 1777 թ.²⁹: Բերդումյանի մյուս գործերի այս գործաշումներով, Եկեղեցու հայրերի ու զանազան հեղինակների վկայություններով: Դժբախտաբար, ինչպես պարզեցինք ուսումնափրության ընթացքում, այս գործը մեզ թերի վիճակում է հասել. հավանաբար բանտից ազատվելուց հետո ծանրաբնույթյան պատճառով հեղինակը ժամանակ չի ունեցել ամբողջաշներու իր աշխատությունը: Սրբազն Հայրը մեկնել է ընդամենը Ս.-ԽԱ, գլուխմերը (Վերջին գլխից մեկնը ված է ընդամենը երկու համար՝ ԽԱ, 1, ԽԱ, 14), իսկ մնացած մասը ձեռագրի գրիչը Վերցրել է Կուտմելիոսի համանուն մեկնության համառոտ խմբագրությունից: Այս կապակցությամբ ձեռագրի գրիչ Հովհան Միհրզա Վանանդեցին գրում է. «Յայս վայր հասուցեալ զմեկնութիւնն իւր Աստուածաշնորհ բանիրուն այրն պանձալի Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումնեան լուսալ էր այնուհետև, չգիտեմ յի՞՛զ պատճառէ, զորոյ գթերին ի համառոտեալ մեկնութենէն Կուտմելիոսի լրացուցաք, զոր թարգմանեալ է Հովհան վարդապետն Խարբերդցի»:²⁹: Հետաքրքրական է, որ Երուսաղեմյան ձեռագրում, որի գրիչը Կրկին Հովհան Վանանդեցին է, որևէ նշում չկա այս մասին³⁰: Գրիչն ուղղակի շարունակում է իր շարադր Վանանդեցին է, որևէ նշում չկա այս մասին³¹:

բույրունն այնքան մեծ էր, որ Ակսեցինք վերսորի աչքի անցկացնել առկա ձեռագրացուցակները: Եվ ուսումնակարության ընթացքում գտամք, որ Մաշտոցյան Մատենադարանի N 2220 (էջ 78ա-83ր) ձեռագիրը պարունակում է այս երկը, այս և այլ նարգերի մասին տեսն Տիգրան սարկավագ Բաղումյան, Աշվ. աշխ.:

²⁷ Ձեռագրի մկարագրությունը տեսն Ցուցակ Սրբոց Յակոբեամց, Բ. Բ. 1967, էջ 29-30: Պետք է նշել, որ Ժամամակին եղել է այս մեկնության ևս մի ձեռագիր ընդօրինակություն, որը, ցավոք, 1915 թ. տեղի ունեցած Եղունագրությունից հետո ամեն կորել է: Այդ ձեռագիրն Արմաշի ձեռագրացուցակի N 68 ձեռագիր մատյանը (ձեռագրի մկարագրությունը տեսն Յ. Թօփենեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վամբին, Վեճստիկ, 1962, էջ 212-213): Ցավոք ձեռագրի մկարագրությունը մեզ հմառավորություն չի ընձնում եցրիտ եղանակացության համար. արդյո՞ք սա նույն ձեռագիրն է, թե՞ ոչ: Հայերն ձեռագրերի կորսված հավաքածումների մասին տեսն Գեղր Տէր-Վարդանեան, Հայերէն ձեռագրերի կորսուած հաւաքածումների ցուցակների Բրատարակման խմբիր, «Հշմիածին», Ա., 2003, էջ 54-68, Գեղր Տէր-Վարդանեան, Ստեփանոս Եպիսկոպոս Յակովացի, մականոն Տիգրացու, ԺԲ. դար, «Հշմիածին», Բ-Գ, 2004, էջ 101-127:

²⁸ Տեսն Աստուածամամութիւն. Հանգամմաք վարուց հեղինակին:

²⁹ ՄՄ ձեռ. N 2718, էջ 64ա:

³⁰ Երուսաղեմ, ձեռ. N 253, էջ 130:

րանքը: Բայց, ինչպես ցուց է տալիս բնագրային համեմատությունը, այն իրոք կուտակիդուի գործի մեկ մասն է:

Պետրոս արքեպաս. Բերդումյանի այս իմքնուրույն մեկնությունը գալիս է լրացնելու Արարածոց գործի մեկնություններն ու իր ճպասար քերում հայ մեկնողական հարուստ գրականության պատմության ուսումնասիրության գործին: Նմանատիպ մեկնությունները մեզ հնարավորություն են ընձեռում ոչ միայն պատկերացում կազմելու տվյալ ժամանակաշրջանի կրոնա-աստվածաբանական մտքի նվաճումների ու մակարդակի մասին, այլև ժամանակի վարք ու բարքի, տիրող մտայնությունների, հասարակական հարաբերությունների, իրավական վիճակի և այլն մասին: Պակաս արժեքավոր չեն նրանցում տեղ գտած բանահյուսական, պատմա-բանասիրական, լեզվաբանական, մատենազիտական, բարոյա-խրատական, բնագրագիտական, աշխարհագրական-տեղագրական, մշակութաբանական և այլ շերտերը, որոնց ըննությունը կարևորվում է մի շարք գիտակարգերի համար: Ընդհանրապես անհրաժեշտ է նշել, որ ԾԱնողոց գործի մեկնությունները հարուստ հյութ են պարունակում այնպիսի բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են բնագիտությունը, աստղագիտությունը, կենդանաբանությունը, բուսաբանությունը, մարդաբանությունը և գիտության այլ բնագավառները: Ինչպես գրում է Աշանավոր հայագետ Լ. Խաչիկյանն իր մեծարմեր ուսումնասիրության մեջ՝ արձանագրելով. «Այդպիսի մեկնություններում շոշափվում էին բազմաթիվ հարցեր երկնքի և երկրի կառուցվածքի, երկնային մարմինների հատկությունների, օգերևութարանական երևությունների, տոլորակների, բույսերի, կենդանական աշխարհի և մարդու վերաբերյալ: Այդպիսով, առանձին գիտական բնագավառների բացակայության պայմաններում, այդ գործի մեկնությունները կոչված էին բավարելու ընթերցող շրջանների ծարավը բնագիտության տիեզերացիտության, կենդանաբանության, բուսաբանության և այլ գիտությունների գծով»³¹:

Բերդումյանի այս մեկնությունը, ինչպես տեղեկանում ենք ձեռագրի հիշատակարանց, գրված է «ի լուսաւորութիւն մամկանց Սուրբ Եկեղեցոյ»³²: Ուստի հեղինակի մյուս աշխատությունների նման սա էլ հավանաբար գրվել է դասագիրք դառնալու հպատակով՝ բավարարելու համար Եկեղեցու մանուկների պահանջները: Քանի որ գրության նպատակն ավելի շատ ուսուցողական է եղել, այդ պատճառով էլ մեկնությունն աչքի է ընկնում իր առավելապես բարոյա-դաստիարակչական ուղղվածությամբ: Սակայն Բերդումյանը չեր կարող շրջանցել ԾԱնողոց գործի մեկնությունից բխող շատ հրամանակարգային և վարդապետական խնդիրներ ևս, ուստի թիւ չեն նաև այս բնագավառին վերաբերող հրա մտածումներն ու դատողությունները»³³:

³¹ Լևոն Խաչիկյան, Եղիշեն «Արարածոց մեկնութիւնը», խմբագրությամբ Լևոն Տեր-Պետրոսյանի, Երևան, 1992, էջ 168-169:

³² ՄՄ ձեռ. N 2718, էջ 74ր:

³³ Տես՝ Տիգրան սարկավագ Բաղդումյան, Աշվ. աշխ.: Ելմելով մեկնության բովանդակությունից՝ թեմատիկ թեսուլայ բաժանումներ ենք կատարել՝ աստվածաբանական, ծիսական, բարոյա-խրատական, պատմա-բանահյուսական և ընդհանուր հարցեր՝ մեկ առ մեկ քննելով և վերլուծելով Բերդումյանի մտածումները: Ավարտանառում ցուց ենք տվել նաև, որ Բերդումյանը, տուրք լատինական մուածողությամը, գրում է, որ Աստվածածինը մարդկային ցեղի մեջ միայն է, որ աղամական մերձ չի ունեցել: Մեր Եկեղեցու ըմբռնումներից շենքոյ այս և նմանատիպ գայթումներն են հավանաբար պատճառ դարձել Բերդումյան-Սիմեոն Կաթողիկոս հակա-

Ինչպես Բերդումյանի մյուս մեկնողական երկերը, այնպես էլ այս գործն աչքի է ընկանում աղբյուրների բազմազանազանությամբ: Քննելով և հնարավորինս վեր հանելով նրա օգտագործած աղբյուրները՝ մեզ համար առավել որոշակի է դառնում գիտական և գրական այն ատաղձը, որի հիման վրա ստեղծվել է հայ մեկնաբանական գրականության պատմության մեջ Աստվածաշունչ մատյանի առաջին գրքի այս վերջին մեկնությունը³⁴: Մանրանալով Բերդումյանի նաև մյուս գործերին՝ տեսառում ենք, որ Պետրոս Սրբազնը հիրավի քաջատեղյակ է իրեն անհրաժեշտ հրապարակի վրա եղած բոլոր աղբյուրներին: Նա ծանոթ է մինչև իր ժամանակ լուս տեսած գորերն բոլոր տպագիր գրքերին: Անշուշտ իրեն մեծապես օգնել է նաև օտար լեզուների իր քաջիմացությունը, որոնց շառորմիվ առ իրագեկ է նաև օտար աղբյուրների: Բացի տպագիր աղյուրներից, Բերդումյանն օգտագործել է նաև ձեռագիր մատյաններ: Միով բամի՞՛ մեր առջև հատնում է կրթալ և բանիմաց մի հոգևորական, որի նպատակն է եղել հոգևոր սննում տալ Եկեղեցու մանուկներին՝ կրթելով նրանց սուրբ հայրերի մշտամնա խոսքերով ու շամբելով Ս. Ավետոստանի անխարդախ կաթոլ: Աշխատության ընթացքում փորձել ենք գտնել-հայտնաբերել այն բոլոր աղբյուրները, որոնցից օգտվել է Սրբազն Հայոց: Անշուշտ, մեզ հիշաշողվեց պարզել բոլոր մեջբերումների տեղիները, բայց պարզվածներն ել բավական են կարծիք կազմելու այս հանրագետ հոգևորականի լայն մտահորիզոնի մասին: Աղբյուրները դասակարգել ենք հետևյալ կերպ:

1. Աստվածաշունչ մատյան
2. Հայրախոսական երկեր
3. Անտիկ փիլիսոփաների երկեր
4. Վարքագրական աղբյուրներ
5. Ծիսամատյաններ
6. Զրույցներ

1. Բերդումյանի «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության համար, անկասկած, առաջին աղբյուրն Աստվածաշունչ մատյանն է, որի տարբեր գրքերից հեղինակը բազմաթիվ մեջբերումներ է կատարում հաստատելով և հիմնավորելով իր այս կամ այն դրույթն ու միաժամանակ համեմելով իր երկասիրությունն Աստծո կենացն խոսքով: Ըստհանրագետ Բերդումյանի գործերն առատ ու ճոխ են սուրբգրային մեջբերումներով, որոնք հեղինակի կողմից թերվում են երեք ձևով՝ Առյանությամբ (ուղղակի), համեմատական կարգով և ականակեղով Ս. Գրքի այս կամ այն համարը, հատվածն ու դրվագը:

Առաջին հարցը, որ մեր առջև ծառացավ, հետևյալն էր. Աստվածաշնչի ի՞նչ բնագիր է օգտագործել Պետրոս Սրբազնը իր այս մեկնության համար: Անշուշտ հարցում ինչ-ո՞ր առումով դյուրիմ էր, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, Բերդումյանն օգտագործում է հիմնականում տպագիր աղբյուրներ: Խակ 1777 թ., երբ նա գրում էր իր մեկնությունը, Աստվա-

մարտության համար: Եվ Խակիրմ այնքան է սրվել, որ Կաթողիկոսի հրամանով այրել են Բերդումյանի աշխատությունները:

³⁴ Մեր օրերում Արարածոց գրքի մասմակի մեկնություն-ուսումնասիրություն է գրել Հակոբ Եպս. Գըլթամբ, տե՛ս Յակոբ Եպս. Գըլթամբ, Մեկնութիւն Արարածոց, Մոմտէվիտէ, 1995:

ծաշնչի երեք հրատարակություն էր կատարվել՝ Աստվածաշնչի Ուկանյան հրատարակությունը³⁵, Կ. Պոլսի 1705 թ. տպագիրը³⁶ (նախորդի արտատպությունը) և Մշիթար Սեբաստացու 1733 թ. Վեմետիկում տպագրած Աստվածաշունչը³⁷: Վերջին հրատարակության տարբերությունն այն էր Ուկանյան տպագրից, որ Աբբամայրը որոշ հատվածներ մաքրել-սրբագրել էր լատինաբանություններից³⁸: Համեմատելով սուրբգորային համարները Ուկան Երևանցու և Աբբամայր հրատարակած Աստվածաշնչերի հետ՝ հանգեցինք հետևյալին: Բերդումյանն օգտվել է Աբբամայր հրատարակած Աստվածաշնչից ու նրա լուսանցքներում եղած տարբերություններից: Համոզվելու համար բերենք երկու գուգակներ:

1733 թ. Աստվածաշունչ

«Բան զամենայն շարժուն շարժագոյն է իմաստութիւն» (Իմաստ. Է 24):

«Մարգարեացաւ և եօթներորդն յԱղամայ Ենովք և ասէ. "Ահաւասիկ եկն Տէր բիլուք սրբովք հրեշտակօք, առնել զդատատան ըստ ամենայնի....,"» (Հուդ. Ա. 14-15):

1666 թ. Աստվածաշունչ

«Բան զամենայն շարժումն շարժագոյն է իմաստութիւն» (Իմաստ. Է 24):

«Մարգարեացաւ և եօթներորդն յԱղամայ Ենովք և ասէ. "Ահաւասիկ եկն Տէր բիլուք սրբօք հրեշտակօք, առնել զդատատան ըստ ամենայնի....,"» (Հուդ. Ա. 14-15):

Համեմատության ընթացքում նկատեցինք նաև, որ կան բայերի, նրանց ժամանակների ու հոլովների տարբերություններ: Կան նույնիսկ համարներ, որոնք չեն համապատասխանում երկու Աստվածաշունչ մատյաններին էլ: Մեր կարծիքով, այս տարբերությունները կարելի է բացատրել կա՞մ այն հանգամանքով, որ Բերդումյանը դրանք շատ հաճախ վկայակոչել է հիշողությամբ, կա՞մ էլ բացաված չէ, որ նրա ձեռքի տակ եղել է ձեռագիր ինչ-որ Աստվածաշունչ:

Սրբազն Հոր օտար լեզուների իմացությունը հնարավորություն է ընձեռնել վերջինիս Ծննդոց գրքի գորաք բնագրի առանձին տողեր համեմատել Ա. Գրքի այլ թարգմանությունների հետ: Նա մասնավորապես գուգակներ է անցկացնում Ա. Գրքի լատիներեն, արարերեն, ասորերեն թարգմանությունների հետ: Դ զիսում, օգտվելով Ղուկաս Վանանդեցու աշխատությունից, բերում է նաև տողի երրայլեցերեն տարբերակը (ՄՄ ձեռ. N 2718, էջ 20ա): Երբեմն տալիս է նաև առանձին բառերի երրայլեցերեն գուգահետները: Հավանաբար Սրբազն Հայրն իմացել է առանձին բառերի նաև երրայլեցերեն համարժեքները, չնայած բացառված չէ, որ նա տիրապետել է նաև այս լեզվին:

³⁵ Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, յԱմստերդամ, 1666:

³⁶ Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլս, 1705:

³⁷ Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց, Վէմետիկ, 1733:

³⁸ Այս մասին տես՝ Հ. Ա. Անասյան, Հայկական մատենագիտություն, Բ. Բ. Երևան, 1976, էջ 337-340:

2-3 կետերը քննել ենք միասին՝ հիշատակելով այն բոլոր հեղինակներին, որոնց համար վաճառ հիշում է Պետրոս արքեպոս։ Բերդումյանն իր «Մեկնութիւն ՄԱՆԵՐ» երկում։ Այդ հեղինակներն են՝

Պլատոն (427-347 Ն. Ք.): Անտիկ աշխարհի այս մեծությանը Բերդումյանը վկայակոչում է երկից։ Այսպես՝ «Բնութեամբ ձերով էք ապականելիք, իսկ կամա իմով՝ անաշխում է երկից։ Այսպես՝ մեջքերումը դժվարանում ենք ասել, թե հեղինակի ո՞ր գործից է Սրբապականք» (զլ. Ա.) մեջքերումը դժվարանում ենք ասել, թե հեղինակի ո՞ր գործից է Սրբապականք։ Ամուսնութեամբ կարծիքը անտիկ փիլիսոփաների գործերին Բերդումյանը հազար Հայոց վերցրել։ Մեր կարծիքով, անտիկ փիլիսոփաների գործերին Բերդումյանը հազար Հայոց վերցրել։ Մեր կարծիքով, իսկ ամանը նրանց երկերից, կամ՝ «Բանք իմաստնոց» ժողովածուներից, կամ՝ էլ միջնորդավորված ձևով այլ աղբյուրներից։ Ուստի բացառված չեմ, որ Բերդումյանն այս մեջքերումը վերցրել է Անտոն Կովսիին գործից, որին նա քաշածանութեամբ՝ «Սրբոյն ի պիհոս մերձենալ ոչ է բարինը և իրաւ» (զլ. Ի. Գ., Լ. Ե.), Բերդումյանը ծանութեամբ է հավանաբար Դավիթ Անհաղի միջոցով։⁴⁰

Արիստոտել Ստագիրացի (384-322 Ն. Ք.): Բերդումյանը հաճախ է վկայակոչում այս հեղինակին։ Այսպես՝ «Զի գոր օրինակ՝ մարդն բաղկանայ ի նոգոյ և ի մարմնոյ, այսպես և բաղկացութիւն աշխարհի՝ յերկնից և յերկրէ որպէս սահմանէ Արիստոտել» (զլ. Ա.) հատվածը վերցված է «Յաղագ աշխարհի» երկից⁴¹։ Այս գործից է նաև նույն զլիի մյուս վկայակոչումը՝ «Արիստոտել հինգերորդ տարր ասաց գերկնալին բնութիւնս»⁴²։ Իսկ մյուս մեջքերումը՝ «Զայնքն են նշանակ կրից» (զլ. Գ.), հեղինակի «Պերիարմենիա» գործից՝⁴³ Բ զլիում Բերդումյանը ևս մեկ վկայություն է բերում Արիստոտելից, թէ՝ «Ման է զարհութեալ զարիութեաց»։ Այս վկայության մեկ այլ տարրերակն է, մեր կարծիքով, բերում Ալեքսանդր Զուղալսկին իր «Վկայութիւնը ի պէտս քարոզութեանց» ժողովածուում⁴⁴։

Սեմեկա (մոտ 4 Ն. Ք. – 65 Ք. Հ.): Բերդումյանն այս փիլիսոփային վկայակոչում է իր աշխատության ժողովածուում։ Մեջքերումը, հավանաբար, կրկին «Բանք իմաստնոց» ժողովածուներից է։

Ս. Դիօնիսիոս Արեոպագացի (Ա. դ.): Այս հեղինակը Բերդումյանի սիրած հայրերից է, որի գործերից նա զանազան մեջքերումներ է կատարում ինչպես «Մեկնութիւն ՄԱՆԵՐ», այնպես էլ իր մյուս աշխատություններում։ «Յատկութիւն բարույն է հաղորդել զիրն այլոց» և «Խակ Աստուած ստեղծմամբն զեկսն ըստ աստիճանի իրենանց գոլոյ, կելոյ, զգալոյ և իմանալոյ հաղորդս արար ըստ սրբոյն Դիոնեսիոսի»⁴⁵ (զլ. Ա.) հատվածերը

⁴⁰ Անտոն Կովսին, Փիլիսոփայութիւն, Բ. Գ., Վեմետիկ, 1750, էջ 59:

⁴¹ Դաւիթ Ամաղոյ, Երկարութիւնը փիլիսոփայականը, համարակար քննական բնագրերը և առաջարածը՝ Ա. Ս. Արևշաղյանի, Երևան, 1980, էջ 60:

⁴² Կորիմ Վարդապետի, Մամրէի Վերծանողի և Դաւիթ Ամաղոյի մատեմագրութիւնը, Վեմետիկ, 1833, էջ 604:

⁴³ Հմմտ. Առյամ տեղում, էջ 604–607:

⁴⁴ Հմմտ. Առյամ տեղում, էջ 489–490:

⁴⁵ Ալեքսանդր Զուղալսկի, Ասույթներ քարոզմերի համար, աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Տ. Բագրատ արելա Գալստյանի, Հակոբ Քյոսեյանի, Ա. Էջմիածին, 1998, էջ 87, Ն 1126:

⁴⁶ Տե՛ս The Armenian Version of the works attributed to Dionysius The Areopagite, edited by Robert W.

իմաստային մեջբերումներ են հեղինակի «Յաղագս աստուածային անուանց» երկից: «Զսրբազան թագութիւն և գեղապարութիւն լուսաց...»⁴⁶ (զլ. Ա.) հատվածը կրկին իմաստային մեջբերում է: «Յաղագս երկնային» երկից: Նույն երկից են նաև «...բոցեղէն սուրն են սերովքըն, որ զոլով բառ երբայական թարգմանի կիզիչ, որպէս և քերովքէն՝ զեղումն գիտութեան...»⁴⁷ (զլ. Գ.) հատվածը և «Եւ տեսանեմք, զի և աստուածային խորհըրդոյն Յիսուսի մարդեղութեան»⁴⁸ (զլ. ԻԸ) մեջբերումը: Վերջինս բառացի մեջբերում է, քանզի այդ են հուշում տողատակի տարընթերցվածները: Բերդումյանն այս հեղինակին վկայակոչում է նաև ԼԲ զլիսում⁴⁹:

Մարկոս Ավելիոս (121-161-180): Բերդումյանն այս հեղինակին վկայակոչում է մեկ անգամ իր մեկնության ի՞Դ զլիսում⁵⁰. Մեջբերումն իմաստային է:

Ամբրոսիոս Մետիուանեցի (340-397): Բերդումյանն այս հեղինակից բերում է «Սիրողն Աստուծոյ սիրով կնոշ ոչ յաղթի» (զլ. ԼԹ) միտքը: Դժվարանում ենք մատնանշել նրա օգտագործած աղբյուրը. գուցե նրա Մնանդոց գրքի մեկնությունից⁵¹ է, կամ դրան նվիրված իր ճաներից:

Ս. Հովհանն Ոսկեբերան (347-407): Բերդումյանն այս սուրբին վկայակոչում է իր աշխատության ԼՇ և ԼԹ զլովմերում: Դժվարանում ենք նշել աղբյուրը:

Օգոստինոս Հիպոնացի (354-430): Բերդումյանն այս հեղինակին վկայակոչում է ԺԹ զլիսում: Դժվարանում ենք նշել աղբյուրը:

Սոկրատ Սքոլաստիկոս (380-440): Բերդումյանն իր մեկնության ի՞և զլիսում վկայաբերում է Հովհանոսի հետ կապված մի զրուց: Վերջինս նախատում է մի կույր եախսկոպոսի, որն էլ պատասխանում է նրան. «Գոհանամ զԱստուծոյ, զի ի լուսոյ աստուածպաշտութեան խաւարեալ զդէմի ոչ տեսանեմ»: Ի տարբերություն Մաշտոցյան Մատնադարանի ձեռագրի, երուաղեմյանն այս զրուցին հավելում է՝ «պատմէ Սոկրատես» արտահայտությունը: Ինչպես պարզեցինք, վկայությունը Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմությունից» է⁵²:

Պրոկի Դիադոխոս (411-485): Հովն նշանավոր փիլիսոփա, մաթեմատիկոս և գեոպլատոնականության ներկայացուցիչ: Պրոկի զլաւավոր երկը՝ «Աստվածաբանության սկզբանմերը» («Ծաղկապը աստուածաբանականք»), վրացերենից հայերեն է թարգմանել Սիմեոն Պղնձահանեցին 1248 թ.⁵³: Վերջինիս գործերը մեկնել են Սիմեոն Զուղացին և

Thomson, Lovani, 1987, p. 160-162: Ս. Դինմիսիոս Արենպագացին նայ մատնագրության մեջ հայտնի է առավելապես Արիստակացի տարբերակով:

⁴⁶ Հմմտ. նույն տեղում, թ. 5:

⁴⁷ Նոյն տեղում, թ. 19:

⁴⁸ Նոյն տեղում, թ. 15:

⁴⁹ Հմմտ. նույն տեղում, թ. 134-135:

⁵⁰ Տե՛ս «Գիրք ուկեղէն և թուղթը քաղցրալուրք», թարգմ.՝ Գարբիել Համազասպյան Երևանցու, Վեմետիկ, տապ. Անտոնի Բորտոնի, 1738, էջ 137:

⁵¹ Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիմ, թարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ պատմութիմ վարուց սրբոյն Սեղբեստորսի նախկնապոսին Հովհաննայ, թարգմանեալ Արասում Գրիգորի Զորափորեցույ, աշխատահիութեամբ Մեսրոպ Վ. Տէր Մովսէսան, Վաղարշապատ, 1897, էջ 246:

⁵² Հ. Ներսէս վ. Ակիմեան, Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանութիմները վրացերենէ, Վիեննա, 1951, էջ 23:

Սիմեոն Երևանցին: Նրան վերագրված «Գիրք պատճառացը», որը վերոգրյալ երկի համառոտթյունն է, լատինաբենից հայերեն է թարգմանել Ստեփանոս Լեհացին: Հենց այս գրքից էլ Բերդումյանը կատարել է իր իմաստային մեջքերումը Ա. զիշտում⁵³:

Ս. Դավիթ Անհաղթ (Ե. Դ.): Բերդումյանի աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել Ա. Դավթի գործերը: Ծատ դեպքերում, եթե անգամ նա հանվանք չի տալիս նրա անունը, ակնքախ է Դավթից ազդված լինելը: Մեր կարծիքով, շատ հաճախ, երբ Պետրոս Սրբազնա այլ իմաստասերներից մեջքերումներ է կատարում, նրա աղբյուրը կրկին Դավիթ Անհաղթի գործերն են: Այս մեկնայաց մեջ Բերդումյանը սրբին վկայակոչում է երկիցս: Այսպես՝ «Յոր միտ ասէր Պղատոն ըստ սրբոյն Դաւթի Անյաղթին. »Արարիշն հրատարակէր առ իմանալի»⁵⁴ (զլ. Ա) հատվածը խմբագրումն է վերոնշյալ հրատարակի, իսկ «...հոգին է մշտաշարժ, որով և անմահ, որպէս ասէ Անյաղթ փիլիսոփայն Դաւթի»⁵⁵ (զլ. Ա) մեջքերումը կրկին խմբագրումն է «Սահմանք իմաստափրութեան» երկի համապատասխան հատվածի:

Ս. Մովսես Խորենացի (Ե. Դ.): Բերդումյանը Պատմահորը վկայակոչում է 4 անգամ, որոնցից երեքն իմաստային մեջքերումներ են Պատմահոր անմահ գործից՝ «Հայոց պատմություննից». «Սա ըստ անուան իրոց ընտրեցաւ ի մեջ նահապետաց...»⁵⁶ (զլ. Դ), «Ողջախորհութեամբ ուսուցանելով մեզ զպարկեցտոթիւն...»⁵⁷ (զլ. Ե), «Յորոց և»⁵⁸ (զլ. ԺԷ), իսկ մյուսը բառացի մեջքերում է Տիրոց հրաշափառ ծննդյանը վերջինիս նվիրված շարականից. «Մաքրողական պարզեցան շնորհը աղաւանակերպ իշմամբ Սուրբ Հոգուն ջորցըն սրբութեան»⁵⁹:

Հովհան Դամասկացի (Է - Ը դդ.): Բերդումյանն այս Բեղինակին վկայակոչում է ի և Թգովաներում: Դժվարանուան ենք նշել օգտագործված աղյուրը:

Ս. Գրիգոր Նարեկացի (Ժ-ԺԱ. դդ.): Պետրոս Սրբազնա իր գործում Նարեկի Բեղինակին վկայակոչում է չորս անգամ: Այսպես՝ «Ի գնալն քո ի Վերայ ջուրցն...» (զլ. Ա) մեջքերումը Նարեկացու «Աղոյթամատյանից» է, որը Բեղինակը կատարել է Բիշողությամբ⁶⁰: Խոսելով Ղովտի կնոջ գործած մեղքի մասին՝ Պետրոս Բերդումյանը կրկին մեջքերում է «Մատյանից» «Ո՛չ իսկապէս ընդ անպարտսն է....» (զլ. ԺԹ) բառացի հատվածը⁶¹: Մեջքե-

53 Գրգուկ որ կոչի Պատճառաց. որ է մասմ իմչ ի գորոց պատճառացն Արիստոտելի կամ որպէս ոմանք կարծեան Պրոկլի իմաստափրի, Կ. Պոլիս, 1750, էջ 59:

54 Դաւթի Անյաղթ, էջ 30, նաև Դավիթ Անհաղթ, Երևեր. թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Ս. Ա. Արևշատյանի, Երևան, 1980, ծմթ. 5-րդ, էջ 302:

55 Դաւթի Անյաղթ, էջ 80:

56 Հմմտ. Մովսեսի Խորենացւու Պատմութիւն Հայոց; աշխատութեամբ Մ. Արենեան և Ս Յարութիւնեան, Տփլիս, 1913, Գիրք Ա, զլ. Դ, էջ 15:

57 Հմմտ. Գիրք Ա, զլ. Դ, էջ 16:

58 Հմմտ. Գիրք Բ, զլ. ՀԴ, էջ 211-212:

59 Զայնքաղ շարական (=Օտրական), Վաղարշապատ, 1888, էջ 44:

60 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատափրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Բամ 1, գ. տ. 117-119:

61 Ս. Գրիգոր Նարեկացին իր «Աղոյթամատյանու» Ղովտի կնոշը երկակ բանությամբ արձամ է ամվանում («Երկեակ բանութիւն ի նոյն արձամի»), այսինքն կազմված աղից ու քարից, որ ամենընքի (Ղովտի և նրա դուստ-

րելով Երգ Երգոցի Բ 5 համարը՝ նա վկայակոչում է Նարեկացու «Խոցեալ հոգի՝ սիրով փեսային» (զլ. Թ) հատվածը, որը բառացի մեջքերում է Եկեղեցուն Ավիրված Ս. Գրիգորի գանձից⁶²: Բացի վերոգրյալ հատվածներից, Բերդումյանն իր մեկնության ժԱ. զլյում գրում է. «Յոյժ բարուք լինէր, եթէ ամենայն քրիստոնեայր մի հովիվ իմանալով զ-Քրիստոս, ինքեանք իցէին մի հօտ միաբան, միախորհուրդ և միակրօն, և ո՛չ վասն դոյզն ինչ եկեղեցական աւանդութեան միմեանց հայիոյիշ և բաժանող պատմուճանին Քրիստոսի որպէս ասէ Նարեկացին Գրիգոր ի բանս հաւատոյ»: Նարեկացուն Վերագրվող «Համառուսիք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքոր վարուց առաքինութեան»⁶³ գործում մենք չգտանք վերջինիս խորհրդածությունն արծարծվող խնդրի մասին: Թու «ի բանս հաւատոյ» գործ ասելով ինչ ի նկատի ունի Պետրոս Բերդումյանը, դժվարանում ենք ասել:

Ս. Ներսէս Ծնորհալի (1102/1098-1173): Մեր Եկեղեցու Ավիրական այս սուրբ հորը Բերդումյանը բազմից վկայակոչում է՝ երբեմն առանց անունը տպու: Այսպես՝ միայն «Արարչական» շարքից ունենք 5 բառացի մեջքերումներ. «Կամքն Աստուծոյ գործ է եղելոց...»⁶⁴ (զլ. Ա), «Նորաստեղծեալ բանն յանէից...»⁶⁵ (զլ. Ա), «Խաւարն անգոյ և սկրզբնածին...»⁶⁶ (զլ. Ա), «Զջորսն ի ջուրցն բաժանեաց...»⁶⁷ (զլ. Ա), «Աստ գործեսցուք ըգգործս Աստուծոյ...»⁶⁸ (զլ. Բ): Իմաստային մեջքերում է նաև «Առաջին բարբառն Աստուծոյ գոյացոյց զլոյս»⁶⁹ (զլ. Ա) նախադասությունը:

Բացի այս շարքից, Բերդումյանը մեջքերում է նոյն հեղինակի «Երգ Վեցերորդի ժամուն»-ից «Արեգակն և լուսին զկամեալն մերկ ի խաչին...»⁷⁰ (զլ. Թ) հատվածը: Բերդումյանն օգտվել է նաև Ծնորհալու «Վիպասանությունից», որից և 2 մեջքերումներ է կատարում. «Արամանեակ անդրանկացեալ...»⁷¹ (զլ. Ը), «Եւ Քանանու զարմ անիծեալ...»⁷² (զլ. Ժ):

Իմաստային այս, այնպես էլ իր մյուս գործերում Պետրոս Սրբազնը լայնորեն օգտագոր-

րերի) և մեղավորների (Սողոմ-Գոմորի բնակիչների) միջևն է կամզմած («Ո՛չ խկապէս ընդ անպարսն է, և ո՛չ համայն ընդ պատժապարտսն»), տե՛ս Մատեան ողբերգութեան, Բան ԿԳ, տ. 10-11, նաև Ծնթ. 2-րդ, էջ 1071:

⁶² Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր, աշխատամիջությամբ Արմին Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 165, տ. 50:

⁶³ Այս գործի մասին տե՛ս Պողոս Խաչատրյան, Աշվ. աշխ., էջ 133-150, իմաստն նաև Գրիգոր Վարդապետ, Խօսք ճշմարիտ հաւատորի և առաքինաւէր վարքի մասին, Երևան, 1992, էջ 5-10:

⁶⁴ Տե՛ս «Ժամագիրք, որ է կարգաւորութիւն հասարակաց աղօթից և ժամերգութեան Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ...», Յերուաղել, 1915, էջ 319:

⁶⁵ Նոյն տեղում, էջ 302:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 316:

⁶⁷ Նոյն տեղում, էջ 314:

⁶⁸ Նոյն տեղում, էջ 319:

⁶⁹ Հմմտ. նոյն տեղում, էջ 302: Նոյն միտքն է արտամայտում նաև Վարդան Արևելցին Հնգամատյանի իր մեկնությամ մեջ, տե՛ս ՄՄ Ճեռ. N 1135, էջ 9ա:

⁷⁰ Նոյն տեղում, էջ 336:

⁷¹ Ներսէս Ծնորհալի, Վիպասանութիւն, քննական բնագիրը պատրաստեց, ծանոթագրեց և առաջարանը գորեց Մամիկ Մկրտչյան, Երևան, 1981, էջ 42, տ. 115-116:

⁷² Նոյն տեղում, էջ 91, տ. 838-839:

ծում է Ծնորհալի Հայրապետի «Յիսուս Որդի» քերթակածը⁷³, որից էլ 3 մեջբերումներ կան «Մեկնութիւն ՄԱՅՈՐ» աշխատովթամ մեջ: «Եւ իմ զերծեալ հաղթից նոցին...»⁷⁴ (գլ. ԺԱ), «Սանրութ եղեալ յերկր յերկին...»⁷⁵ (գլ. ԻԸ) «Մի՛ նմանեցայց որդուց Սեթին...»⁷⁶ (գլ. Զ): Մյուս 2 մեջբերումները Ծնորհալու՝ հայոց գրերին նվիրած գրծերից է, որից առաջինը բառացի է, իսկ մյուսը՝ իմաստային: «Զի որ ի յայս սէ՛ր է համակ...»⁷⁷ (գլ. Զ), «Լոյսն առաջին ևս...»⁷⁸ (գլ. Ա): Բայց այսքանով չեն եղորակակվում Ծնորհալուց թերված մեջբերումները. Բերդումյանը վկայակոչում է նաև հատվածներ Ս. Ներսէսի նեղինակած շարականներից: «Որ ի վերայ ջորցն գոլով...»⁷⁹ (գլ. Ա), «Պարունակեալ պահէին զճանապարհ...»⁸⁰ (գլ. Գ) բառացի և «Հոգին է ճման Հօր և Որդոյ»⁸¹ (գլ. Ա) իմաստային մեջբերումները:

Հովհան Դուռս Սկոտ (1265/1266-1308): Բերդումյանը մի քանի անգամ վկայակոչում է այս հեղինակին «Սկոթու» ձևով: Իմաստային վկայությունները քաղված են հայ ձեռագրական աշխարհում տարածում գտած վերջինիս «Աստուածաբանութիւն» գործից: Գործս լատիներենից հայերեն է թարգմանել Ղուկաս Խարբերդցին: ԺԸ դարի պոլսաբան դպրոցներում Սկոթոսի այս երկասիրությունն օգտագործվել է իբրև դասագիրք: Այսպես՝ Ա. զիսում, մեկնելով Արար Աստուած հատվածը, Բերդումյանը գրում է. «... ուր մինչ կամքն հրամայէ, զգայութիւնքն իսկոյն դնին ի գործ առ կատարումն հրամանի կամաց, որպէս ասէ Սկոթու»⁸²: Եւ ասաց հատվածը մեկնելիս Պետրոս Սրբազնը նշում է, որ Սկոթոսը ստեղծման պատճառ է համարում կամքը⁸³: Քիչ ներքև, նույն հատվածը մեկնելիս արձանագրում է, որ Սկոթոսն ասում է. «Հայր ասելով՝ ծնանի զՈրդին»⁸⁴: Ա. 6 համարը մեկնելիս կրկին Բերդումյանը Սկոթոսից այս գործից կատարում է իմաստային մեջբերում⁸⁵:

Վարդան Արևելցի († 1271): Բերդումյանն իր Արարածոց մեկնության Գ զիսում, մեկնարանելով Գ 22 համարը, վկայակոչում է «Մեծն Վարդանին»: Իմաստային մեջբերումը Վարդան Արևելցու Հնգամատոյանի մեկնությունից է⁸⁶:

Թովմա Աքվինացի (1225/1227-1274): Պետրոս Սրբազնն իր աշխատովթամ մեջ այս հեղինակին վկայակոչում է Ա. զիսում: Մեջբերումն իմաստային է՝ քաղված հեղինակի

73 Ի դեմ՝ Ծնորհալու այս քերթակած այն եզակի գործերից է, որ Բերդումյանի հայոց որպես հոգևոր սպում շամբել է մասունք Պետրոսին: «Որ աղօթասէր գոլով,- միշտ է Բերդումյանը,- ի մամկութեամ իմում միշտ կրտէ զիս լայօթ»՝ տալով ի ձեռու իմ զնիվությունունին, զթիսու Որդին և զնարենկացին...» (տե՛ս ՄՄ ձեռ. N 10, էջ 2ը):

74 Ներսէս Ծնորհալի, Բանք չափա, Վենետիկ, 1928, էջ 19:

75 Ներսէս Ծնորհալի, Բանք չափա, Վենետիկ, 1830, էջ 64:

76 Նույն տեղում, էջ 15:

77 Նույն տեղում, էջ 337:

78 Հմմտ. Առաջնակ, էջ 316:

79 Ծարական, էջ 298:

80 Ծարական, էջ 391:

81 Ծարական, էջ 289:

82 Հմմտ. ՄՄ ձեռ. N 6478, էջ 24ր, ձեռ. N 125, էջ 121ա-124թ:

83 Հմմտ. ՄՄ ձեռ. N 6478, էջ 16ր-17ա, 31-32ա, 73թ-74ա, 128ա:

84 Հմմտ. ՄՄ ձեռ. N 6478, էջ 156ա-161թ, ՄՄ ձեռ. N 125, էջ 115ա:

85 Հմմտ. ՄՄ ձեռ. N 125, էջ 196թ-197թ:

86 ՄՄ ձեռ. N 1135, էջ 41ս:

«Հաւաքումն աստուածաբոլթեան» երկից⁸⁷:

Դուկաս Վանանդեցի (ԺԷ. դ.): Բերդումյանն այս հեղինակին վկայակոչում է մեկ անգամ «զՏէրն մարդն ստացայ» (զլ. Դ): Վկայությունը Վանանդեցու «Պատկերասէր պատկերացեաց» գրքից է, որը հետևյալն է ասվում. «Զայրն՝ զՏէրն ստացայ»⁸⁸:

Հերթական Լորենցիոս: Լատին Եկեղեցու վարդապետ և Սուրբ Բենեդիկտյան միաբանության անդամ: Բերդումյանն իր մեկնության ԻՍ. 22 համարում հիշատակում է այս հեղինակի «Անտառ այլաբանութեան» գործը: Այս աշխատությունը լատիներենից հայերեն է թարգմանել Դուկաս Վանանդեցին «ի փառ մեծագոյնն Աստուծոյ և ի յօգուտ աշակերտաց եղեղոց մերոյն դասատան և այլոց ընթերցասիրաց անձանց»⁸⁹: Ավելի քան 2500 մեծադիր էջերից բաղկացած երկնատոր այս գործը Աստվածաշնչի խրթին ու այլաբանական հատվածների մեկնությունն է: Քանի որ գետեղված նյութը չունի տրամաբանական հաջորդականություն և ավելի շատ նման է անտառում բուսած խայտաբղետ բուսականությանը, գործին տվել են «Անտառ այլաբանութեան անունը»:

Կուտնելիոս Ալափիտա (1567-1637) (Cornelis Cornelissen van den Steen): Քանի որ Կուտնելիոսը Բերդումյանի կողմից ամենաշատը վկայաբերվող հեղինակն է, և նրա մասին սակագ են նաև տեղեկությունները մեր մատենագրության մեջ, ուստի փորձել ենք վերջինի ավելի մանրամասն անդրադառնալ: Նա ծնվել է 1567 թ. դեկտեմբերի 18-ին⁹⁰ Բոչոլտում: Հումանիտար գիտություններ և փիլիսոփայություն է սովորել Մայենստրիչսի և Կոլունդի Հիսուսյան քուեցներում: Նախ աստվածաբանություն է ուսումնասիրել Դուեյի համալսարանում, ապա չորս տարի էլ՝ Լուվենում՝ 1592 թ. Բունիսի 11-ին անդամագրվելով Հիսուսյան միաբանությանը⁹¹: Եթեր տարի հետո, 1595 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռնադրվել է քահանա: Այնուհետև կես տարի Լուվենի համալսարանում փիլիսոփայություն ուսումնասիրելուց հետո՝ ստացել է էկզեկցետիկայի պրոֆեսորի աստիճան: Մինչև 1616 թ. գումար համալսարանում դասավանդել է Աստվածաշունչ և եքրայեցներն, այնուհետև տեղափոխվել է Հռոմ, որտ և կնքել է իր մարկանացուն 1637 թ. մարտի 12-ին:

Հիսուսյան միաբանության բեղմնավոր անդամներից է, որի մեկնություններն իրենց ազդեցությունն են թողել Ս. Գրիգոր Բետագ մեկնիչների վրա: Իր ողջ գիտակցական կյանքը նա նվիրաբերել է Աստծո խոսքի տարածմանն ու Աստվածաշնչի մեկնաբանմանը: Մեկնել է ամբողջ Աստվածաշունչ մատյանը, բացի Հռոմի և Սահմոսաց գրքերից:

Բազմիցս վերաբիրատարակվել են նրա հեղինակած մեկնությունները, որոնք ակնհայտ վկայություններն են այն մեծ հարգանքի ու հոչակի, որ վայելել է Կուտնելիոսը մեկնաբա-

⁸⁷ Տե՛ս Great Books of the Western World, v. 19, The Summa Theologica of saint Thomas Aquinas, Chicago, 1977, v. 1, p. 10:

⁸⁸ Դուկաս Վանանդեցի, Պատկերասէր պատկերատեաց, ՅԱմստերդամ, 1716, էջ 208:

⁸⁹ Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի, թ. Ա., կազմեց Արտավազդ արքեպաս. Սիրմէեամ, Երուսաղեմ, 1948, էջ 55:

⁹⁰ Այս հեղինակի մասին տե՛ս The Catholic Encyclopedia (Cornelius Cornelii a Lapide քառահոված) <http://www.newadvent.org/cathen/04377a.htm>: The New Schaff-Herzog Encyclopedia of Religious Knowledge, V. 3, Michigan, 1950, p. 272: Խ դեպ' այս բառարանում որպես ծննդյան օր նշվում է դեկտեմբերի 12-ը: Encyclopedia of Catholic History, Huntington, Indiana, 1995, p. 232:

⁹¹ Համար The New Schaff... բառարանի, Կուտնելիոսը միաբանության շարքերն է ամցել 1597 թ.:

նույզան ասպարեզում: Աշխատությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, որոնց մեջ իրենց ուրուց տեղն ու դերն ունեն վերջինիս հայերեն թարգմանությունները, որոնք ցայսօր ուսումնամիրված չեն:

Կուռմելիոսի մեկնությունների հայերեն թարգմանությունները ցրված են հայ ձեռագրերի տարրեր հավաքածուներում: Միայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում կան 30-ից ավելի ձեռագրեր, որոնք ներառում են վերջինիս այս կամ այն մեկնությունը: Բարձր են գնահատել այս հեղինակի գործերը ձեռագրերի գրիչներն ու խմբագրողները՝ անվանելով նրան «գերազանց աստուածաբանութեան վարդապետ»⁹² ու «քաջն մեկնի Աստուածաշունչ գրոց»⁹³:

Նրա երկերը լատիներենից հայերեն է թարգմանել Ղուկաս վրդ. Խարբերդցին: Կան առաջ կուռմելիոսի անունով մեզ հասած այլ մեկնություններ, որոնք երեսն չունեն հիշատակարաններ, և խորագրերում հշված չեն թարգմանչի անունը: Բայց քանի որ Կուռմելիոսի երկերի այլ թարգմանիչ մեզ հայտնի չեն, կարելի է կստահաբար ասել, որ դրանք ևս թարգմանել է Ղուկաս վարդապետը: Այս հեղինակի համանուն մեկնությունը Բերդումյանի հիմնական աղբյուրն է⁹⁴: Մենք Կուռմելիոսի Ծննդոց գրքի մեկնության ընդարձակ տարրերակը (ՄՄ ձեռ. N 1005) համեմատեցները Պետրոս Բերդումյանի աշխատության ժետ և դուրս բերեցներ բոլոր նմանատիպ հատվածները: Այստեղ ի նկատի ունենք նաև այն հատվածները, որոնց դեպքում Բերդումյանը չի տալիս վերջինիս անունը, բայց ակնհայտ է Կուռմելիոսից ազդված և օգտված լինելը: Ուստի ստորև բերում ենք մասամբ իմաստային և մասամբ բառային նմանատիպ մի քանի հատվածներ.

ՄՄ ձեռ. N 2718

ՄՄ ձեռ. N 1005

...ի ոստու սերմնատորքն յայտնի են, իսկ որք ումին զանրմն յարմարս են սոքին՝ ուղիղ, սէզն, աճանուխն, քրքումն, խատորն, եղէզն, մոճակի ծառն, ոփն ծառն և այլք (զլ. Ա):

Խորիրդականապէս նշանակէ Քրիստու ի հանգչին յաւուր շաբաթու ի գերեզմանի և սրբոցն ի յերկինս (զլ. Բ):

...վասն զի բազում տունկը ոչ ունին զանրմն յատկապէս ասացեալ, որպէս յայտ է //51թ յուին, ի սէզն, յաճանուխն, ի քրքումն, ի խատորն, յեղէզն, մոճակի ծառն, յոփն ծառն և այլն...:

Այնպէս զի ի կատարիլն նոցա գայ մեռն, օրն դատաստանին և շաբաթն, այսինքն՝ հանգիստն սրբոց //71ա ի յերկինս որպէս ուսուցանէ սուրբն Հերօնիմոսի ի մեկնութեան սաղմոսի ԶԼ:

⁹² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Թակորենամց, թ. Գ, 1968, էջ 130:

⁹³ Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Թակորենամց, թ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 71:

⁹⁴ Ի դեպ՝ Միհիթը Սրբատացու «Մեկնութիւն Մատթէհ» աշխատության հիմնական աղբյուրը նույզան կուռմելիոսն է (տե՛ս «Բազմավեպ», Վեմեստիկ, 1949, էջ 281–284, 294):

Արեգակամ՝ հայրն, լուսնի՝ մօրու մայրն,
և աստեղաց՝ եղբարքն անանեցան... (գլ.
ԼՀ):

Արդարն մեծ արհեստ է ըստ Կուտնելիո-
սի ընդ Աստուծոյ շրջիլ հաճոյապէս (գլ. Ե):

Դարենի հեշտութեամբ և զիմեաւ կորոյս
զթագաւորութիւնն և զկեանս ասէ Կուտնե-
լիոս (գլ. Թ):

Վերոգրյալ հատվածները ցուց են տալիս, որ Բերդումյանը Կուտնելիոսից գրեթե բա-
ռացի մեջքերում չի կատարել, այլ խմբագրել և նոր միայն մատուցել ընթերցողին: Հե-
տաքրքրիր է, որ Վերոբերյալ հատվածներից միայն վերջինում է Բերդումյանը տալիս
Կուտնելիոսի անունը: Անշուշտ բերված համեմատությունները Կուտնելիոսի մենաշնորհը
չեն, քանզի ինքն էլ օգտվել է այլ հեղինակներից: Աշխատովյան ընթացքում նաև դուրս
ենք բերել այն հատվածները, երբ Սրբազն Հայրն ակնարկում է Կուտնելիոսի՛ գրելով՝
«այսպէս ասէ Կուտնելիոս» կամ «ըստ Կուտնելիոսի» և այլն: Ստորև բերում ենք այդ հատ-
վածներից մի քանիսը.

ՄՄ ձեռ. N 2718

ՄՄ ձեռ. N 1005

Զամանէ ասէ Կուտնելիոս, թէ նոյն է
ընդ Նեղոսի և բերէ վկայ զերեմիա Բ 18,
ուր ասէ. «Զի՞ կայ քեզ և ճանապարհին
Եղիպտոսի ըմպել քեզ զջուր Գեհոնայ»
(գլ. Բ):

Կուտնելիոս ասէ. «Նշանն խնդրէ վասն
յետնորդաց», բայց ասեմ թէն Աբրահամու
միտն էր հաստատ, բայց ըստ որում մարդ,
կարօտիր նշանի (գլ. ԺԵ):

Արեգակն նշանակէ զհայրն, լուսիաց՝
զմայրն...: Աստեղքն նշանակեն զմետա-
սան եղբարսն...:

Էջ 281թ

Մեծ արհեստ է զիտել շրջիլ ընդ Աս-
տուծոյ և զնա յամենաուրեք ումիլ մերկայ...:

Էջ 115ա

...ի Կիրոսէ միմչև ցԴարենի, որ
հեշտութեամբ և զիմեաւ կորոյս զտէրու-
թիւնն ընդ Կենի:

Էջ 144թ

ՄՄ ձեռ. N 1005

Ասեմ նախ, թէ բազմաց հարց և վար-
դապետաց վճիռն է, թէ Գեհօնն է Նե-
ղոսն...և ապացուցանի նախ, զի Երեմիա
Բ 18:

Էջ 76ա

Ոչ այնքան ինքնան, որքան յետնոր-
դացն զնշան խնդրէ աստ Աբրամ, զի այ-
սինքն՝ այսու նշանաւ յետնորդքն հաստա-
տապէս ի նա հաւատայցէին, այսպէս
Գայեթամն:

Էջ 174ա

Հայ Կուտնելիոսի ի Հռովմ հոր անկա, միայն իննոչենցիոս պապն զերծաւ (գլ. ԺԹ):

...Քրդեմանեն յամի Տեառն 910 յԱստուծոյ զերծաւ սուրբն իննօնչենցիոս պապըն սակա անմեղութեան և պրոլետեան կենաց և վարուց....

Էջ 200p

Կուտնելիոսի մեկնությունն ընթերցելիս մկատեցինք, որ Քերդումյանը շատ հաճախ նույն սուրբգորային համարներ է բերում ՄԱՆՈՒ գրքի այս կամ այն հատվածը մեկնելիս (օր.՝ ՄԱՆՈՒ. Թ 9): Բայց, անշուշտ, Քերդումյանը կուրորեն չի հետևում նրան և շատ անգամ ընդդիմանում է իր դատողություններով: Այսպես՝ Ժ 5 համարը մեկնելիս Քերդումյանը գրում է, թե Կուտնելիոսը մի զրոյց է բերում, ըստ որի՝ Նոյ Զահապետը ջրինելից հետո փոխել է իր բնակավայրը՝ տեղափոխվելով Եվրոպա (Արուսադեմյան ձեռագրում Խոտալիա), որի և սովորել է երկրագործություն, տրամարանություն, աստեղաբաշխություն և տրամարանություն⁹⁵: Բայց Սիրազան Հայոն ընդդիմանում է Վերջինին՝ գրելով. «Եւ զայս թուի, թե Հնիքելով ազգին իւրոյ իցէ ասացեալ, քանզի Նոյ առ Մասիսից իշխանն կալաւ և առաջին քաղաք զնախիչնան շինեաց, որպէս և ամուս յայտնէ: Նաև առ Նոյի յիտպիա ոչ զոյր բնակութիւն, զի ջրինելին սպառեաց զամենայն մարդիկ»: Կամ է՛ զիսում Քերդումյանը ավելորդ է համարում Կուտնելիոսի այն պնդումը, թե՝ «Աստուած 238 մասն երկրի ի գոլորշիս և յանձրես երոյ և եկից զայնքան միջոցն»⁹⁶:

Իսկ է 20 համարը մեկնելիս Քերդումյանը գրում է, թե Կուտնելիոսն այն կարծիքին է, որ տասնինգ կանգուն բարձրացավ ջուրը, որպեսզի բարձրահասակ հսկամերը լեռների կատարներին և ծառերի վրա բարձրանալով ազատվեին կործանարար ջրինելից: Հետաքրքրի է, որ Կուտնելիոսը ճիշտ հակառակն է ասում: Ահա թե ինչ է նա այս կապացությամբ գրում. «Գիտելի է, թե հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն ի վերայ ամենայն լեռանց, զի մի՛ երկարագոյն հսկայքն կամ այլ հզօրագոյն կենդանի ի զագաթս բարձրագուն լեռանց պահի կարիցէր»⁹⁷:

Մեզանում Կուտնելիոսի երկերի տարածվածության և արժեքի մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ ԺԸ դարում Երուաղեմի երեք միաբաններ՝ Պողոս արքեպոս. Առյիանապոլսեցին, Սարգիս եպոս. Ֆերմանյանը և Սամվել վրո. Երզմկացին, խմբագրել-համառոտել են Վերջինիս մեկնությունները: Հավանաբար սրանք ծառայել են որպես դասագիրք Երուաղեմի ժառանգավորների համար: Խակ ինչպես նշել էինք, Քերդումյանի ձեռագրի գրիչը՝ Հովհան Միհրզա. Վաճանակցին, տեսնելով, որ գործը թերի է, մնացած մասը լրացրել է «ի համառունակ մեկնութենք» Կուտնելիոսի⁹⁸: Ուստի հետաքրքրի էր, թե գրիչը ո՞ր խմբագրությունն է օգտագործել՝ լրացնելով թերին: Ուստիմնասիրության

⁹⁵ Տե՛ս ՄՄ N 1005, Էջ 178ա:

⁹⁶ Նոյն տեղում, Էջ 130ա:

⁹⁷ Նոյն տեղում, Էջ 131ա:

⁹⁸ ՄՄ ձեռ. N 2718, Էջ 64ա:

ընթացքում սկսեցինք աչքի անցկացնել Մաշտոցյան Մատենադարանի՝ Կուտնելիոսի մեկնությունները: Եվ արդյունքում մեզ համար պարզ դարձավ, որ գրիչը թերի մնացած մասը վերցրել է Պողոս Ադրբանապղունեցու խմբագրությունից: Ի դեպ՝ մեր օգտագործած ձեռագրի գրիչը ևս Միրզա Վանանդեցին է: Արդեն իսկ աշեղ էինք, որ երուսաղեմյան ձեռագրում գրիչը չի նշում, որ կիսատ մասը վերցրել է Կուտնելիոսի երկից, սակայն համեմատությունը Մաշտոցյան Մատենադարանի 4030 թվահամարի ձեռագրի հետ ցուց տվեց, որ այն իրոք Կուտնելիոսի ԾԱնոթ գրքի մեկնության համառոտ տարրերակից է: Տարրերությունն այն է, որ երուսաղեմյան ձեռագրում Կուտնելիոսից բերված հատվածներն ավելի շատ են:

ՄՄ ձեռ. N 2718

Եւ կոչէ զՅովսէփ
եգիայտյական լեզուա
փրկիչ աշխարհի (ԽԱ.
45):

Զի փրկեաց Եզիատոս
ի սովու և է օրինակ ամե-
նափրկչին Քրիստոսի:
Արդ, եթէ Աստուած զխո-
նարիս և զմեղեալս յաշ-
խարհի աստ այսպէս փա-
ռաւորէ, զի՞նչ արդեօք ո՞չ
տացէ ի հանդերձելումն:
Եթէ ո՞չ զայն, զոր ակն ո՞չ
ետես և ունկն ո՞չ լուաւ և ի
սիրտ մարդոյ ոչ ամկաւ
ըստ առաքելոյն (տե՛ս Ա.
Կորնթ. Բ 9): Մշեա ապա
և զքեզ, ո՞վ դու ի նեղու-
թինս, զի հանգիցես ի
հանգիստ նոցա և ալլն:
Այլաբանօրէն զՅովսէփ,
այսինքն՝ զՔրիստոս
բարձրացոյց Հայրն երկ-
նաւոր՝ ասելով. «Դա՝ է
որդի իմ սիրելի» (Մատթ.
Գ 17, ԺԸ 5): Պատմու-
ճանն բեմեզեալ է փառքն

ՄՄ ձեռ. N 4030

Եւ կոչէ զՅովսէփ ե-
գիայտական լեզուա
փրկիչ աշխարհի (ԽԱ. 45):

Զի փրկեաց զԵզիա-
տոս ի սովու, և օրինակ
Քրիստոսի ամենափրկչ-
ին աշխարհի: Եւ եթէ
Աստուած զխոնարս և
զմեղեալս աստ այսպէս
փառաւորէ, զի՞նչ արդ-
եօք ապանում աշխարհի
ոչ տացէ: Յայտ է, թէ
զայն որ ակն ո՞չ ետես և
ո՞չ ի սիրտ մարդոյ
ամկաւ, և ոչ ունկն լուաւ,
զոր պատրաստեաց Աս-
տուած սիրելեաց իրոց
ըստ առաքելոյն (տե՛ս Ա.
Կորնթ. Բ 9): Ապա ո՞վ դու
մղեայ զինքնդ ի
նեղութինս, զի հանգը-
տացես ի հանգստեան
երկմից ևն: Այլաբանօրէն
Յովսէփ, այսինքն՝
զՔրիստոս բարձրացոյց
Հայրն՝ ասելով. «Դա՝ է
որդի իմ սիրելի» (Մատթ. Գ
17, ԺԸ 5): Բեմեզեալ
պատմուճանն է փառքն
մարմնոյ, զոր զգեցաւ և

Երուսաղեմ, ձեռ. N 253

Եւ կոչէ զՅովսէփ
եգիայտական լեզուա
փրկիչ աշխարհի (ԽԱ. 45):

Զի փրկեաց զԵզիայ-
տոս ի սովու, և օրինակ
Քրիստոսի ամենափրկչին աշ-
խարհի: Եւ եթէ Աստուած
զխոնարս և զմեղեալս աստ
այսպէս փառաւորէ, զի՞նչ
արդեօք յապանում աշ-
խարհի ոչ տաց: Յայտ է, թէ
զայն որ ակն ո՞չ ետես և ո՞չ
ի սիրտ մարդոյ ամկաւ, և ոչ
ունկն լուաւ, զոր պատ-
րաստեաց Աստուած սիրե-
լեաց իրոց ըստ առաքելոյն
(տե՛ս Ա. Կորնթ. Բ 9): Ապա
ո՞վ դու մղեա զինքնդ ի
նեղութինս, զի հանգստաս-
ցիս ի հանգստեան նոցա ևն:
Այլաբանօրէն Յովսէփ,
այսինքն՝ զՔրիստոս բարձ-
րացոյց Հայրն՝ ասելով. «Դա
է որդի իմ սիրելի» (Մատթ. Գ
17, ԺԸ 5): Բեմեզեալ
պատմուճանն է փառքն
մարմնոյ, զոր զգեցաւ և

մարմնոյ, զոր անմեղութիւն նորա զգեցաւ: Զմատամին եւս նմա Հայոց երկնաւոր, զի զնա կը քեցաց Աստուած: Ուսկեղէն մամելկա, այս է՝ փառաւոր ձրիւճ մարմնոյ, զարդարեաց և նաստոյց զնա ի կառու, զի ամենայն իհան եւս ի ձեռու նորա: Յառաջընթաց եղան քարոզ՝ սուրբ Յովհաննէն Մկրտիչ. Վերակցու եղան զնա ի վերայ բոլոր Եզիդոսոսի, այսինքն՝ աշխարհի: Ես ի զա զդատաստանն և զանուն փրկչի աշխարհի՝ հարսն զեկ[ե]լ[ե]ցի և զամենայն զարդն իւր:

Էր Յովսէփ ամաց երեսնից (ԽԱ. 46): Աստի յայտ է, թէ Յովսէփ 14 ամ ծառայեաց յԵզիդոտոս, այլ Աստուած ընդ այսքան աշխատութեան նորա եւս նմա իշխանութիւն 80 ամաց, զի յերեսուն ամաց մինչև ի 110 եկեաց իշխան: Տե՛ս, թէ զո՞րքան ամս յաղթեաց նա առաջնութեամբ, վասն որոյ և Աստուած իսկ զնա փառաւորեաց:

Գ. 17, ԺԷ: Բեթեզեա պատմուճանն է փառքն մարմնոյ, զոր զգեցաւ և անմեղութիւնն նորա, ըզմատամին եղ, զի զնա կը քեցաց հայրն, ուսկեղէն մամեակն աշանակէ զփառաւոր օժիտսն մարմնոյ, զի եղ զնա ի վերայ կատին, զի զԱստուած եւս ի ձեռու նորա. նախ ընթացաւ մունետիկն Յօհաննէն[ս] Մըկրտիչն. Վերակցու արար զնա բոլոր Եզիդոտոսի, այսինքն՝ աշխարհի. եւս նմա զդատաստան և զանուն փիլոկիչ աշխարհի և հարսն եկեղեցի և զամենայն զարդն իւր:

Եւ էր Յովսէփ ամաց երեսնից (ԽԱ. 46): Ուստի աստի յայտնի է, թէ Յովսէփ ծառայեաց տասն և չոր ամ յԵզիդոտոս, բայց Աստուած փոխանակ այսքան աշխատութեանն Յովսէփա եւս իշխանութիւն ութուն ամ, զի երեսուն ամէ մինչև ի հարիւր և տասն ամ ապրեցաւ. տես թէ որքան զամս նա յաղթեաց առաջինութեամբ, վասն որոյ Աստուած իսկ զնա փառաւորեաց:

անմեղութիւնն նորա, զմատանին եղ, զի զնա կը քեաց հայրն, ուսկեղէն մամեակն աշանակէ զփառաւոր օժիտսն մարմնոյ, զի եղ զնա ի վերայ կատին, զի զամենայն զամանակէ զփառաւոր օժիտսն մարմնոյ, զի եղ զնա ի վերայ կատին, զի զԱստուած եւս ի ձեռու նորա. նախ ընթացաւ մունետիկն Յօհաննէն[ս] Մըկրտիչն. Վերակցու արար զնա բոլոր Եզիդոտոսի, այսինքն՝ աշխարհի. եւս նմա զդատաստան և զանուն փիլոկիչ աշխարհի և հարսն եկեղեցի և զամենայն զարդն իւր:

Եւ էր Յովսէփ ամաց երեսնից (ԽԱ. 46): Ուստի աստի յայտնի է, թէ Յովսէփ ծառայեաց 14 ամ յԵզիդոտոս, բայց Աստուած փոխանակ այսինքն աշխատութեանն Յօվսէփու եւս իշխանութիւն 80 ամ, զի 30 ամէ մինչև ի 110 ամ ապրեցաւ. տես թէ որքան զամս նա յաղթեաց առաջինութեամբ, վասն որոյ Աստուած իսկ զնա փառաւորեաց:

Ասասչիք, թէ այր խաշնադարման եմք (ԽԶ 34):

Տես աստանօր զհամես- տութիւն, զխոնեմութիւն և զխոնարհութիւն թովսե- փայ, զի ո՞չ կամեցաւ զինքն բարձրացուցանել իբրու թէ իցէ ի գերազնի տոհմէ, այլ ի հովուական տոհմէ: Նաև ո՞չ կամի, զի եղբարք իր կացցեն յա- պարան փարաւօնի, և ուսեալ զաւելորդապաշ- տութիւն կրթեսցին ի մո- լութիւնս նոցա:

Ասասչիք, թէ այր խաշնադարման եմք (ԽԶ 34):

Տես աստանօր զհամես- տութիւն, զխոնեմութիւն և զխոնարհութիւն թովսե- փայ, զի ո՞չ կամեցաւ զինքն բարձրացուցանել իբրու թէ իցէ ի գերազնի տոհմէ, այլ ի հովուական տոհմէ: Նաև ո՞չ կամի, զի եղբարք իր կացցեն յա- պարան փարաւօնի, և ուսեալ զաւելորդապաշ- տութիւն կրթեսցին ի մո- լութիւնս նոցա:

Ասասչիք, եթէ արք խաշնադարման եմք (ԽԶ 34):

Տես աստ Յօվանիկայ զհա- մեստութիւնն, զխոնեմու- թիւնն և զխոնարհութիւնն, զի ո՞չ կամեցաւ զինքն բարձրացուցանել իբր թէ իցէ ի գերազնի տոհմէ, այլ ասէ ի հովուական տոհմէ: Նաև ո՞չ կամի, զի եղբարք իր յապարան փարաւօնի եկեալ, կրթիցեն ի մոլութիւնս նոցա և ուսանիցին զաւելորդապաշտութիւնս ե- գիպտացուց:

4. Բերդումյանն իր մեկնության մեջ, ի շարու այլ աղբյուրների, օգտագործում է նաև վարքագրական աղբյուրներ, որոնք հարստացնում և համեստում են այն Քրիստոս Աստծո կենդանի վկաների՝ սրբերի օրինակներով: Ընդհանրապես սրբախոսական գրականութ- յունն իր պատշաճ տեղն է զբաղեցնում հեղինակի գրեթե բոլոր աշխատություններում: Անշուշտ դժվար է այսքան հեռավորությունից մատնանշել Բերդումյանի օգտագործած աղբյուրները, քանզի հեղինակի նախասիրություններից է իր ձեռքի տակ եղած այդ աղբյուրները խմբագրելու յուրահատուկ ձևով մատուցել ընթերցողին:

Այսպես՝ ի վարս հարանց գրի, թէ յորժամ Ակակիոս հնազանդն մեռաւ, ոմն եղբայր առ գերեզմանին ենիրց. «Եղբայր Ակակիէ, մեռա՞»: Զայնեաց ի գերեզմանէն. «Հնա- զանդն զիա՞րդ կարէ մեռանի!» (զլ. ԻԲ) հատվածը «Հարանց վարդից» է⁹⁹: Բերդումյան իշխ զլսում բերում է մեկ ուրիշ հատված՝ գրելով՝ «Պետրոս աքքայն զմի ակն կորոյս, ասէ. «Գոհանամ զԱստուծոյ, զի ի միոյ թշնամոյ զերծայ»: Այս հատվածը, ինչպես պարզեցինք, առ վերցրել է Կուտմելիոսի համանուն մեկնությունից՝ որոշ խմբագրում կատարելով¹⁰⁰: Բերդումյանը բերում է նաև վկայություններ Անտոն Անապատականի վարդից՝ «աստանայ Անտօնի խոստովանեցաւ, թէ խոնարհութեամբ միայն յաղթէք դուք զմեզ» (զլ. ԼԳ) և «այսպէս Անտօնի յետ փորձութեան երևեցաւ Աստուծո» (զլ. ԻԶ)¹⁰¹:

5. Աղբյուրների դասակարգման մեջ որպես առանձին կետ նշել էինք. Միսամատյան-

⁹⁹ Ամփոփ վերապատումն է համապատասխան մասի. տե՛ս «Գիրք որ կոչի Հարանց Վարք», Կ. Պոլիս, 1720, էջ 323:

¹⁰⁰ Տե՛ս ՄՒՄ ձեռ. N 1005, էջ 235ր:

¹⁰¹ «Վարք երանելոյն Անտօնի Եղիպտացոյ միայնակեցի», տե՛ս «Վարք սրբոց հարանց և քաղաքավարութիւնը նոցին», ըստ կրկին թարգմանութեան մախմեաց, Բ. Ա. Վեմետիկ, 1855, էջ 17–80:

Աեր բաժինը: Այստեղ ի նկատի ունեմք բոլոր այն մեջքերումները, որոնց աղբյուրը կամ ժամագիրք է, կամ էլ Ծարականց ժողովածուն: Այս ժողովածուներից մեջքերումները զետեղել ենք 2-3 կետերի մեջ՝ համապատասխան հեղինակների բաժնում: Սակայն Բերդումյանն Ա զիստը հետևյալ բառացի մեջքերումն է կատարում Ծարականցից՝ առանց հեղինակի անունը. «Տէր Աստուած մեր, որ հաստատեցեր զլոյս և զխաւար ի ըսկրամէ¹⁰²»:

6. Բերդումյանի հախասիրություններից են նաև իր գործերում զանազան զրուցների և պատմությունների մեջքերումները: Դրամբ հարստացնում և ավելի հետաքրքիր են դարձնում ՄԱՆԵՐԸ գրքի այս մեկնություննը: Բացի սրամից, ժողովրդական բառ ու բանի օգտագործումը մեկ անգամ ևս խոսում է այս քաջ հովվի լայն մտավոր կարողությունների մասին: Այս աշխատությունը ևս այդ առումով բացառություն չէ: Զրուցները հիմնականում կապահանջությունը կամ փիլիսոփաների, արքաների և այլոց հետ, որոնք, մեր կարծիքով, Պետրոս Սրբազնը վերցուել է կամ «Բամբ իմաստնոց» ժողովածուներից, կամ էլ դուրս բերել իր կարդացած գրքերից: Օր.՝ Բերդումյանը Լ.Ե զիստը բերում է հետևյալ զրուցը, թե՝ «Սոկրատէս զզանգուած արծաթոյն ընկեց ի ծով, զի մի սպանցեն զինքն....»¹⁰³, որին մենք հանդիպեցինք «Գիրը ուկեղէն և թուղթը քաղցրալուր» ժողովածուն: Ուստի չենք բացառում, որ հենց այստեղից էլ վերցրել է այս զրուցը Բերդումյանը: Սրբազն Հայոց Գ զիստը էլ մի զրուց է բերում, որը Կերինթոսով հարցով դիմում է Հովհաննես ավետարան շիճ ասելով. «Ծանաչե՞ս զիս, ասաց՝ այո», որու ես անդրանիկն սատանայի»: Ինչպես պարզեցինք, իրականում Մարկիոնն է, որ այդ հարցն ուղղում է Պողիկարպու Զմյունացուն¹⁰⁴: Մյուս զրուցների տեղիները հծվարանում ենք մատնանշել:

Ինչպես տեսանում ենք, Բերդումյանը իր գործում հականն համապատասխան հիշատակում է 21 հեղինակների, որոնցից նաև մեջքերումներ է կատարում այդպիսով հարստացնելով իր մեկնությունը: Հայտնաբերված աղբյուրներն էլ խոսուն վկայություն են ԺԸ դարի այս մեծանուն հոգևորականի պատրաստվածության ու լայն մտահորիզոնի մասին: Անկասկած նրա մեկնությունները, աստվածաբանական-փիլիսոփայական երկերը, «ուկիարան» քարոզները, աղոթքներն ու չափածո երկերը զայիս են հարստացնելու հայ բազմադարյան մշակովի անդաստանը: Անշուշտ, մեզ համար հատկապես կարևոր ենք Վերջինիս հեղինակած աստվածաբանական երկերն ու Ս. Գրքի մեկնությունները, որոնց լուրջ և համակողմանի ուսումնասիրությունը միայն ու միայն պիտի հարստացնելու հայ ասպարեզներում: Ոչ պակաս արծեքավոր են նաև նրա երկերում առկա բանասիրական շերտերը՝ գրաբար բնագրի համեմատությունն Աստվածաշնչի զանազան օտար թարգմանությունների հետ, առանձին բառերի և աստվածաշնչան անձնանունների ստուգաբառությունները, կիրառած աստվածաբանական եզրերի աղբյուրագիտական քննությունը և այլն: Միունք բամիկ՝ Պետրոս Սրբազնը այս բացառիկ հանրագետ հեղինակներից է, որը արժանի է պատշաճ ուշադրության և գնահատամքի:

¹⁰² Ծարական, էջ 151:

¹⁰³ Այս զրուցը տեսն նաև «Գիրը ուկեղէն...», էջ 345:

¹⁰⁴ Տե՛ս Հ. Արքահամ Վ. Ծարեան, Եւսեբիոս Կեսարացոյ պատմութիւն Եկեղեցւոյ, Վեճնտիկ, 1877, էջ 265, և Ըմբամուր Ակեղեցական պատմութիւն, Բ. Ա. Բիսես Երուանդ Վարդապետ Տէր-Սիմասեանց, Ս. Էշմիածին, 1908, էջ 78: